   Հանձնաժողովի նախագահ՝

   1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

   Հանձնաժողովի անդամներ՝

   2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

   3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

   4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

   5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

   Հանձնաժողովի քարտուղար՝

   6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**2025թ. ք. Գյումրի** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2198 Ա

**<<ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Վիվա Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 08-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 09-ին 13338-2025 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել <<Վիվա Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերությանը Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի վահանակներ (լուսատախտակ) ընդհանուր 14,19 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վիվա Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերության լիազորած անձ՝ Գ. Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար
2025 թ. սեպտեմբերի 24-ի
N2198-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
<<ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

| Հ/Հ | ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ | (քառ. մ) |
|---|---|---|
| 1 | Գորկու 50/4 | 8.18 |
| 2 | Շահումյան 185 | 3.85 |
| 3 | Պ. Սևակ 9 | 2,.16 |
| | **Ընդամենը** | **14.19** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2025 թվականի N 2197-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի № 2205-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 247.7 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 77.64 քառակուսի մետր արտաքին (63.1 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» № 2205-Ա որոշման մեջ փոփոխություններ անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2024 թվականի սեպտեմբերի 16-ի N Կ-16092024-08-0222 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 247.7 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 77.64 քառակուսի մետր արտաքին (63.1 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 2205-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «247.7 (երկու հարյուր քառասունյոթ ամբողջ յոթ տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «240.2 (երկու հարյուր քառասուն ամբողջ երկու տասնորդական)» թվով և բառերով:
   2) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «77.64 (յոթանասունյոթ ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «70.14 (յոթանասուն ամբողջ տասնչորս հարյուրերորդական)» թվով և բառերով:
   3) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «63.1 (վաթսուներեք ամբողջ մեկ տասնորդական)» թիվը և բառերը փոխարինել «55.6 (հիսունհինգ ամբողջ վեց տասնորդական)» թվով և բառերով:

2025.09.24 12:22:58 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2196 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի № 1512-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ն. Շնորհալի փողոցի № 19/2 հասցեի բնակելի տան պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 29.64 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 1512-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ն. Շնորհալի փողոցի № 19/2 հասցեի բնակելի տան պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 29.64 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 1512-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝
   1) Նախաբանում և որոշման 1-ին կետում «Նաիրա Տոնոյանին, Սուսաննա Ղայթմազյանին, Գևորգ Արզումանյանին, Անահիտ Գրիգորյանին, Գոհար Խնուսյանին, Դանիել Գրիգորյանին» բառերը փոխարինել «Նաիրա Տոնոյանին (1/7 մաս), Սուսաննա Ղայթմազյանին (1/7 մաս), Գևորգ Արզումանյանին (1/7 մաս), Անահիտ Գրիգորյանին (1/7 մաս), Գոհար Խնուսյանին (1/7 մաս), Դանիել Գրիգորյանին (2/7 մաս)» թվերով և բառերով:
   2) Նախաբանում «համատեղ» բառը փոխարինել «բաժնային» բառով:
   3) Նախաբանում «կետով,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի,» բառերը և թվերը:
   4) Որոշման 1-ին կետում «հողամասը» բառից հետո լրացնել «որպես ընդհանուր բաժնային սեփականություն» բառերը:

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«24» սեպտեմբերի 2025 թվականի N 2195-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ «ԹՎՈՎ 5 ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար բաց մրցույթի միջոցով «Թվով 5 շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2)Դմիտրի Մանվելյան –Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3)Կարեն Կարապետյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ,

4) Հովիկ Ղազարյան– Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,

5) Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6)Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվանից հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2025-09-24 10:46:34 GMT+4
Հաստատված է էԿԵՆԳ-ի կողմից

**2025թ. ք. Գյումրի** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2194-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԹՎՈՎ 5 ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար բաց մրցույթի միջոցով «Թվով 5 շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա.պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝Հենրիկ Գասպարյան– Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,

բ.պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝Կարեն Մխիթարյան – Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**
**2025թ. ք. Գյումրի**

2025-09-24 11:01:31 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2025 **թվականի** N2193-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԳԵՏՆԱՆՑՈՒՄԻ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 496.47 (չորս հարյուր իննսունվեց ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերես ունեցող գետնանցումը զբաղեցնում է 598.16 (հինգ հարյուր իննսունութ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքի սեփականություն հանդիսացող հողամաս:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N51-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի N 1089-Ն որոշման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 496.47 (չորս հարյուր իննսունվեց ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերես ունեցող գետնանցումը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 598.16 (հինգ հարյուր իննսունութ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

Восстановимая подпись

X

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2025թ. նոյեմբերի 24-ի
N 2192 - Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Գյումրու համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների աճուրդ-վաճառք**

| Հ/Հ | | Մակնիշ, | Պետհամարանիշ | Տարեթիվ | Տեսակ, գույն | Նույնականացման համար | Գնահատված շուկայական արժեք | Վիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԼՈՏ N 1 | ԳԱԶ 3309 KO-440-2 | 073LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002756 | 650 000 | Անբավարար |
| 2 | ԼՈՏ N 2 | ԳԱԶ -3309 KO -440-2 | 074LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002787 | 650 000 | Անբավարար |
| 3 | ԼՈՏ N 3 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 076LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002763 | 650 000 | Անբավարար |
| 4 | ԼՈՏ N 4 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 078LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002760 | 650 000 | Անբավարար |
| 5 | ԼՈՏ N 5 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 079LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002742 | 650 000 | Անբավարար |
| 6 | ԼՈՏ N 6 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 081LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002738 | 650 000 | Անբավարար |
| 7 | ԼՈՏ N 7 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 082LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002762 | 300 000 | Անբավարար |
| 8 | ԼՈՏ N 8 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 083LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002759 | 650 000 | Անբավարար |
| 9 | ԼՈՏ N 9 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 084LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002781 | 650 000 | Անբավարար |
| 10 | ԼՈՏ N 10 | ԳԱԶ 3309 KO -440-2 | 085LL70 | 2012 | Բեռնատար, սպիտակ | XVL483213C0002786 | 450 000 | Անբավարար |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | ԼՈՏ N 11 | ԶԻԼ- 130 ԿՕ-413 | 164LL70 | 1984 | Բեռնատար, երկնագույն | Առկա չէ | 350 000 | Անբավարար |
| 12 | ԼՈՏ N 12 | ԳԱԶ 3102 | 677LL70 | 2008 | Սեդան, սև | X9631020081411407 | 350 000 | Վատ |
| 13 | ԼՈՏ N 13 | ԳԱԶ 31105-120 | 861LL11 | 2004 | Սեդան, ավանտյուրա (սև) | XTH31105041238139 | 200 000 | Անբավարար |
| 14 | ԼՈՏ N 14 | ԳԱԶ 31105-20 | 109SO45 | 2004 | Սեդան, ադրիա | XTH31105041226060 | 200 000 | Անբավարար |
| 15 | ԼՈՏ N 15 | ԳԱԶ 311000 | 718SL45 - 529LL70 | 1997 | Սեդան, սպիտակ | **0013658 թափքի համար** | 200 000 | Անբավարար |
| 16 | ԼՈՏ N 16 | ՎԱԶ 21121 | 216SO45 | 2007 | Հետչբեկ, հարդագողի ճանապարհ | XTA21121070487840 | 600 000 | Միջին |
| 17 | ԼՈՏ N 17 | BMV X5 4.4 | 075LL70 | 2001 | Ունիվերսալ, սև | WBAFB33561LH22666 | 800 000 | Անբավարար |
| 18 | ԼՈՏ N 18 | ՎԱԶ 2115 | 007SO45 | 2002 | Սեդան, արծաթագույն | XTA21150023371171 | 200 000 | Անբավարար |
| 19 | ԼՈՏ N 19 | ԳԱԶ3102-121 | 119LL70 | 2006 | Սեդան, ավանտյուրին | X9631020061352986 | 400 000 | Վատ |
| 20 | ԼՈՏ N 20 | ԳԱԶ 31029 | 151SL45- 530LL70 | 1995 | Սեդան, ձյունե սպիտակ | **0350021 թափքի համար** | 150 000 | Անբավարար |
| 21 | ԼՈՏ N 21 | ԳԱԶ 31029 | 388LL01- 528LL70 | 1995 | Սեդան, սև | **308852 թափքի համար** | 150 000 | Անբավարար |
| 22 | ԼՈՏ N 22 | ԳԱԶ 31105-100 | 122LL70 | 2006 | Սեդան, ավանտյուրին | X9631105071359750 | 500 000 | Վատ |
| 23 | ԼՈՏ N 23 | ՎԱԶ 21063 | 140LL70 | 1984 | Սեդան, ձյունե սպիտակ | XTA200630E1101467 | 250 000 | Անբավարար |
| 24 | ԼՈՏ N 24 | ԳԱԶ 3307 | 134LL70 | 1991 | Բեռնատար, սպիտակ | XTH330720M1440396 | 350 000,00 | Անբավարար |

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ներկայացնելով անձնագիրը, մասնակցության վճարի և նախավճարի կտրոնները:

Հայտերն ընդունվում են մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը ներառյալ:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Գյումրու համայնքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնում (2-րդ հարկ), ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.Gyumri.am:

Աճուրդը կայանալու է 2025 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը $16^{00}$ –ին:

Հասցեն՝ Վարդանանց հրապարակ 1, հեռ.՝ 031222227:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2025 թվականի №2192-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն՝ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի N 79-Ա որոշումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներն աճուրդով օտարելու համար 2025 թվականի հոկտեմբերի 7-ին հայտարարել աճուրդ:
2.Հաստատել աճուրդի հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2025 թվականի N 2191-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ԱՐՏՈՒՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ MERCEDES-BENZ E 200 ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԳՈՌ ԱՐՄԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի սեպտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի՝ Արմեն Արտուշի Պետրոսյանը (անձնագիր՝ AS0552302, տրված՝ 11.02.2019 թվականին 064-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 23 օգոստոսի 2008 թվականին ծնված Գոռ Արմենի Պետրոսյանի (անձնագիր՝ AL0380987, տրված՝ 09.08.2023 թվականին 064-ի կողմից) MERCEDES-BENZ E 200 մակնիշի ավտոմեքենան:

Վերոնշյալ մակնիշի ավտոմեքենայի սեփականատեր է հանդիսանում անչափահաս՝ Գոռ Արմենի Պետրոսյանը (հիմք՝ 10 փետրվարի 2025 թվականին գրանցված տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 06 AB159599):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Գոռ Արմենի Պետրոսյանը տվել է համաձայնություն իր ավտոմեքենան վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Արտուշի Պետրոսյանի 2025 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 13823 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Արմեն Արտուշի Պետրոսյանին (անձնագիր՝ AS0552302)՝ վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 23 օգոստոսի 2008 թվականին ծնված Գոռ Արմենի Պետրոսյանի (անձնագիր՝ AL0380987) MERCEDES-BENZ E 200 մակնիշի ավտոմեքենան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Արտուշի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2025-09-24 11:38:03 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թվական քաղաք Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *ՈՐՈՇՈՒՄ*

*«23» սեպտեմբերի 2025 թվականի N 2190-Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՒԶՆԵՑՈՎԻ ՓՈՂՈՑ N19 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 62.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 141.67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (116.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կուզնեցովի փողոց N19 հասցեին կից, 62.3 (վաթսուներկու ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 141.67(հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (116.24(հարյուր տասնվեց ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Ալբերտ Հարությունյանը և Ջուլետա Պապիկյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023W9VBLB ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Կուզնեցովի փողոց N19 հասցեին կից, 62.3 (վաթսուներկու ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 141.67(հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (116.24(հարյուր տասնվեց ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Ալբերտ Հարությունյանին և Ջուլետա Պապիկյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-09-22 16:21:00 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«23» սեպտեմբերի 2025 թվականի № 2189-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՊԱՎԼՈՎԻ ՓՈՂՈՑ, 44/1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №19062025-08-0046) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հաբեթ Հարությունյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №14031 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Գյումրի քաղաք, Պավլովի փողոց, 44/1 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №19062025-08-0046) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

**1) 178.2** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի Ք., Ի. Պավլովի փողոց, 14 բնակելի տուն**

**2) 144.9** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի Ք., Ի. Պավլովի փողոց, 14/1 հողամաս**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» սեպտեմբերի 2025 թվականի № 2188-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 11.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0709-0026-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովայի փողոցի հարևանությամբ գտնվող 11.99 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0709-0026-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Սայաթ-Նովայի փողոց, 4/10 հողամաս**

2025-09-22 16:07:02 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի №** 2187-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 50.59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 50.59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի №2087–Ա որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասում գտնվող 50.59 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 50.59 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մսի կոմբինատ թաղամաս, 43/6 ավտոտնակ**

2025-09-22 16:18:58 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի №** 2186-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 224.09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոցի հարևանությամբ գտնվող 224.09 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Խորենացու փողոց, 68/5 հողամաս**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«22» նոյեմբերի 2025 թվականի № 2185-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 10 (ՎԿԱՅԱԿԱՆ №16052022-08-0042), ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 10/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №13062024-08-0006) ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 10/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №01082025-08-0048) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարուշ Մկրտչյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13854 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Կոմիտասի փողոց 4-րդ փակուղի 10 (վկայական №16052022-08-0042), Կոմիտասի փողոց 4-րդ փակուղի 10/1 (վկայական №13062024-08-0006) և Կոմիտասի փողոց 4-րդ փակուղի 10/2 (վկայական №01082025-08-0048) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կոմիտասի փողոց, 4-րդ փակուղի, 4/1 բնակելի տուն**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2184 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 5174-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Լեռնիկ Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի սեպտեմբերի 04-ին N 13118 թվագրմամբ)՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2011 թվականի դեկտեմբերի 20-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Լեռնիկ Հովհաննիսյանին ժամանակավոր մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով 20.0 քառ.մ մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 5174-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լեռնիկ Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-22 16:53:52 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2183-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ № 181/16 ՀԱՍՑԵԻ 251.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի № 181/16 հասցեի 251.2 (երկու հարյուր հիսունմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի № 181/16 հասցեի 251.2 (երկու հարյուր հիսունմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Восстановимая подпись

X

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2182-Ա

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2. 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի 8. 1-ին և 8. 4-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հաստատել 2025 թվականի սեպտեմբերի 23-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի գովազդի բաժնի առաջատար մասնագետի, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի 1-ին կարգի մասնագետի թափուր պաշտոնների համար անցկացվելիք մրցույթների մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 2182-Ա որոշման

# ԿԱԶՄ

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Մեքինյան Սարգիս-ՀՀ Շիրակի մարզպետի օգնական
2. Անտոնյան Արամ-ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության պետ
3. Պետրոսյան Աշոտ-ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական
4. Մալխասյան Կարեն- ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար
5. Առաքելյան Ավետիս- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
6. Մխիթարյան Արփինե-ՀՊՏՀ ԳՄ-ի հանրային կապերի պատասխանատու, դասախոս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2181-Ա

**<<ՊԻՑՑԱ ՍԹՈՐԻ 1>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ 1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Պիցցա Սթորի 1>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 15-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 15-ին 13865-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Պիցցա Սթորի 1>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Ռիժկովի 1/2 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (սիթի-ֆորմատ) ընդհանուր 1,7 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Պիցցա Սթորի 1>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**